

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արագած Սաղաթեյանի շնորհավորական ուղերձը

Բուժաշխատողի օրվա կապակցությամբ

21.06.2018



Հարգելի՛ բուժաշխատողներ:

Մրտանց ու ջերմորեն շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի՝ Բուժաշխատողի օրվա կապակցությամբ:

Մասնագիտական տոնը ևս մեկ առիթ է, գնահատելու և շնորհակալության խոսքեր ասելու ձեզ՝ ձեր անքուն գիշերների ու հիվանդի կյանքը փրկելու նպատակով մղվող տագնապով լեցուն յուրաքանչյուր վայրկյանի համար:

Բժշկի մասնագիտությունն իրավամբ ամենամարդասիրականն է, քանզի մարդու առողջության պահպանման կարևորագույն գործն իրականացնում են բժիշկները և առողջապահության ոլորտի մյուս աշխատողները:

Դուք էք կյանք պարգևում մարդկանց, ապահովելով լույս աշխարհ եկող մանուկների ու նրանց լույս աշխարհ բերող մայրերի կայուն առողջությունը: Յուրաքանչյուր անձ աշխարհ գալու իր առաջին ճիշն արձակում է ուղղակիորեն ձեր հոգատար ափերի մեջ:

Ցանկանում եմ խորին հարգանքով մասնագիտական տոնի կապակցությամբ առաջնահերթորեն առողջություն մաղթել նաև ձեզ, որպեսզի դուք կարողանաք լիարժեքորեն իրականացնել մարդկանց առողջության պահպանման պատասխանատու առաքելությունը:

Հարգելինե՛րս, համոզված եմ, որ դուք, հավատարիմ մնալով ձեր մասնագիտական կոչմանը, անելու էք հնարավոր ամեն բան, մեր մարզի ազգաբնակչության բուժսպասարկումը պատշաճորեն իրականացնելու, ինչպես նաև սպասարկման ծառայությունների որակը շարունակական կերպով բարելավելու նպատակով:

Վայոց ձորի մարզի հարգելի՛ բուժաշխատողներ, կրկին շնորհավորում եմ ձեզ Բուժաշխատողի օրվա կապակցությամբ և մաղթում եմ աշխատանքային հաջողություններ և մասնագիտական նորանոր ձեռքբերումներ: